Համելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Բագարան
համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 27 -ի
N 28-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԲԱԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակիցների կողմից
**Ներկայացվել է՝** համայնքի ղեկավար Գևորգ Մարգարյանի կողմից
**Հաստատվել է՝** համայնքի ավագանու 2016 թ դեկտեմբերի 27 –ի թիվ 28 - Ն որոշմամբ

Գ.ԲԱԳԱՐԱՆ 2016թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....................................................................

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ........................................................

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ................

4. ՀՁՀԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ........................................................................................

5. ՀՁՀԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.............................................................................................

6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ..........................................................................................

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Արմավիրի մարզի Բագարան համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Արմավիրի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Բագարան համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին »ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Բագարան համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում ներառված են Բագարան համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ, աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ: ՀԶՀԾ-ն ներառում է նաև Բագարան համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Բագարան համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման,

Բագարանի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

Բագարան համայնքի աշխատակազմը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

*Համայնքի ղեկավար՝ Գ.Մարգարյան*

## 2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### *2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

Բագարան *համայնքը գտնվում է Արմավիրի մարզի արևմտյան մասում, հեռավորությունը Երևանից 90կմ,մարզկենտրոնից 45 կմ , բարձրությունը ծովի մակերևույթից 1000 մ:*

*Սահմանակից է Թուրքիայի հանրապետությանը,հեռավորությունը պետական սահմանից 0 կմ:Համայնքի տարածքով անցնում են Ախուրյան և Արաքս գետերը,համայնքը գտնվում է գետերի միախառնման վայրում:*

*Համայնքը ունի մեկ միջնակարգ դպրոց՝աաշակերտների թիվը 60,բուժ կետ և փոստ:*

*Բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ:*

*Համայնքի վարչական տարածքում է գտնվում ճարտարապետական հուշարձաններից Սուրբ Շուշանիկ եկեղեցին (10-րդ դար).*

### *2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

**Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.10.2016 թ. դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Մարդ |
|---|---|---|
| 1. | Բնակչության առկա թվաքանակը | 713 |
| 2. | Տնային տնտեսությունների թվաքանակը | 161 |
| 2.1 | այդ թվում՝ ժամանակավոր կացարաններում /վագոն, տնակ/ բնակվող | 7 |
| 2.2 | կիսակառույց տներում բնակվող | 9 |
| 3. | Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը | 80 |

Համայնքի բնակչության 54.3% կազմում են տղամարդիկ և 45.7% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. Դրությամբ)**

| Հ/Հ | Ցուցանիշները | Ընդամենը | Կանայք | Տղամարդիկ |
|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի բնակչության թիվը, այդ թվում` | 713 | 326 | 387 |
| | մինչև 1 տարեկան | 15 | 10 | 5 |
| | 1-2 տարեկան | 12 | 7 | 5 |
| | 3-4 տարեկան | 13 | 7 | 6 |
| | 5-6 տարեկան | 19 | 5 | 14 |
| | 7-10 տարեկան | 24 | 14 | 10 |
| | 11-14 տարեկան | 27 | 14 | 13 |
| | 15-17 տարեկան | 19 | 5 | 14 |
| | 18 և ավելի տարեկան | 584 | 264 | 320 |
| 2. | Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում` | 49 | 26 | 23 |
| | | | | |
| 3. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | 3 | 0 | 3 |
| 4. | Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | 1 | 0 | 1 |
| 5. | Հաշմանդամ երեխաներ | 0 | | |
| 6. | Խնամակալության հանձնված երեխաներ | 2 | 0 | 2 |
| 7. | Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ | 0 | | |
| 8. | Արցախյան պատերազմի մասնակիցներ | 11 | | 11 |
| 9. | Հաշմանդամներ | 16 | 7 | 9 |
| 10. | Զբաղվածներ /հողագործությամբ/ | 375 | | |
| 11. | Գործազուրկներ | 0 | | |
| 12. | Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը | 16 | | |
| 13. | Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը | 1 | | |

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԸ

- Բագարան համայնքի վարչական տարածքը – 4613.33 հա
- Գյուղատնտեսական նշանակության հողեր – 4393.55 հա
- Բնակավայրային նշանակության հողեր –77.29 հա
- Արդյունաբերական հողեր-12.49 հա
- Էներգետիկայի և տրանսպորտի հողեր-0.58 հա
- հատուկ պահպանվող հողեր-85.97 հա
- Ջրային ֆոնդեր – 39.16 հա
- այլ – 4.29 հա
- Բնակավայրի տարածքը – 77.29 հա
- Հողի սեփականաշնորհման մասնակցած ընտանիքների թիվը - 150
- Մեկ հողաբաժնի չափը մինչև 1.2 հա
- Բագարան համայնքի սեփականություն համարվող հողեր – 740.83 հա

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

- Բագարան համայնքի 2017 թվականի ընդհանուր բյուջեն կազմել է 14774.5 հազար դրամ:
- Որի մեջ համայնքի սեփական եկամուտը կազմում է 32.2 %
- Համայնքում հիմնականում զբաղվում են հողագործությամբ :
- Համայնքում զարգացած գյուղատնտեսությունը հիմնական ճյուղերն են՝
  1. պտղատու այգիներ տարեկան շուրջ 600.0 տոննա
  2. բանջարաբուծություն տարեկան շուրջ 2000.0 տոննա
- Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքը իրականացվում է տեղում և մթերող կազմակերպություններում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Բագարան համայնքի ղեկավարը վերընտրվել է 3-րդ անգամ անընդմեջ 2016թ. սեպտեմբերի 18-ին;
Համայնքի ավագանին / բաղկացած 5 անդամներից/ ընտրվել է 2014թ. հունիսի 8-ին:

Համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 5 աշխատակիցներից՝ հետևյալ կառուցվածքով

1. Համայնքի ղեկավար - 1
2. համայնքային ծառայողներ - 3
3. տեխնիկական աշխատող - 1

## ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

- Բագարան համայնքում կա շուրջ 125 անհատական բնակելի տներ:

  Բագարան համայնքում առկա են բնակելի տների կարիք ունեցող ընտանիքներ, որոնք գտնվում են սոցիալապես անապահով վիճակում:

## Բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանություն ջրամատակարարում

Ոռոգման ջրի ջրապահովվածության պայմաններով համայնքը գտնվում է բարվոք վիճակում:
Ոռոգման ջրամատակարարման համար օգտագործվում է ախուրյան գետի ջրերը:
Անբարենպաստ է գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցի տեխնիկական վիճակը:

Հիմնախնդիրներ՝
Ջրային կառույցների և մատակարարման ցանցի քայքայված և մաշված վիճակ .

## ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- Համայնքի փողոցները հիմնականում հողից են:

Հիմնախնդիրներ՝
ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ
հասարակական տրանսպորտի բացակայություն

## Գովազդ, առևտուր և սպասարկում

Համայնքի տարածքում առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների ընդհանուր թիվը կազմում է 2, այդ թվում՝

- - առևտրի փոքր օբյեկտներ -2

Հիմնախնդիրներ՝
Համայնքում առևտրի միջին և մեծ օբյեկտների բացակայություն
Հասարակական սննդի և սպասարկման ոլորտի օբյեկտների բացակայություն

## ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺԻՆ

*Համայնքի ենթակայության չկա նախադպրոցական հաստատություն :*
*Մանկապարտեզի հիմնախնդիրներն են՝*

- 1.Շենքի կառուցում

Համայնքի ենթակայության տակ չկա գործող գրադարան:

Հիմնախնդիրներ՝
Շենքային պայմաններ
ժամանակակից ընթերցողական գրականության կարիք.

Համայնքի ենթակայության տակ գտնվող մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում
Հիմնախնդիրներ՝
մշակութային տան կապիտալ վերանորոգում, կահավորում
երիտասարդների համար աշխատատեղերի բացակայություն.

- երիտասարդների համար ժամանցի կազմակերպման անբավարար վիճակ:

## Ֆիզկուլտուրա և սպորտ

Հիմնախնդիրներ՝

մարզադպրոցի կարիք.

ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի արմատավորման ոչ բավարար մակարդակ:

## Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

- Համայնքի տարածքը սպասարկում է «Երվանդաշատի բժշկական ամբուլատորիա » փակ բաժնետիրական ընկերությունը :

## ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ

Բագարան համայնքը խաղահրապարակ և զբոսայգի չունի:

## Էներգամատակարարում

Բագարան համայնքի էներգահամակարգը կառավարվում է Հայաստանի էլցանցեր ընկերության կողմից:
Բագարան համայնքը գազամատակարարում չունի:

## Արտաքին լուսավորություն

Բագարան համայնքը արտաքին լուսավորություն չունի:

Հիմնախնդիրներ՝

գիշերային լուսավորության լուսակետերի բացակայություն.

գիշերային լուսավորության ցանցի բացակայություն

## 2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

Համայնքում իրականացվում են ծրագրեր համայնքապետարանի կողմից՝

1.ներհամայնքային փողոցների նորոգում

2.աղբահանություն

## 2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2017թ.՝ 67.8%, 2018թ.՝ 70.1%, 2019թ.՝ 70.5 %, 2020թ.՝ 70.8%, 2021թ.՝ 80.0%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

Աղյուսակ 3. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2015թ. փաստ. | 2016թ. փաստացի | 2017թ. կանխ. | 2018թ. կանխ. | 2019թ. կանխ. | 2020թ. կանխ. | 2021թ. կանխ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ | 13144.3 | 13405.4 | 14774.5 | 15210.0 | 15670.0 | 16130.0 | 16600.0 |
| | | | | | | | | |
| 1 | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1.1 | Հողի հարկ | 2550.0 | 2446.5 | 3500.0 | 3600.0 | 3700.0 | 3800.0 | 3900.0 |
| 1.2 | Գույքահարկ շենք շինությունների և փոխադրամիջոցների համար | 976.0 | 886.9 | 902.4 | 1000.0 | 1100.0 | 1200.0 | 1300.0 |
| 1.3 | Տեղական տուրքեր | 0 | 0 | 50.0 | 60.0 | 70.0 | 80.0 | 100.0 |
| 1.4 | Գույքի վարձակալությունից եկամուտներ Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 176.5 | 49.9 | 300.0 | 350.0 | 400.0 | 450.0 | 500.0 |
| 2 | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ/2.1+2.2/ | 9441.9 | 10022.1 | 10022.1 | 10200.0 | 10400.0 | 10600.0 | 10800.0 |
| 2.1 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 9441.9 | 10022.1 | 10022.1 | 10200.0 | 10400.0 | 10600.0 | 10800.0 |
| | | | | | | | | |

## Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն
### ( եկամտների կանխատեսումը 2015թվականի համեմատ աճը արտահայտված տոկոսներով)

| Եկամտի և ծախսի տեսակը | 2015թ. տարեկան պլան | 2017թ. կանխ. | 2015թ փաստ.նկ տա % | 2018թ. կանխ. | 2015թ փաստ.նկ տա % | 2019թ. կանխ. | 2015թ փաստ.նկ տա % | 2020թ. կանխ. | 2015թ փաստ.նկ տա % | 2021թ. կանխ. | 2015թ փաստ.նկ տա % |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը եկամուտներ** | 13495.1 | 14774.5 | 0.9% | 15210.0 | 12.7% | 15670.0 | 16.1% | 16130.0 | 19.5% | 16600.0 | 23.0% |
| Հարկային եկամուտներ որից | 3752.4 | 4452.4 | 18.6% | 4660.0 | 24.2% | 4870.0 | 29.8% | 5080.0 | 35.3% | 5300.0 | 41.2% |
| Հողի հարկ | 3000.0 | 3500.0 | | 3600.0 | | 3700.0 | | 3800.0 | | 3900.0 | |
| Գույքահարկ /շենք և ավտո/ | 702.4 | 902.4 | | 1000.0 | | 1100.0 | | 1200.0 | | 1300.0 | |
| Տեղական տուրքեր | 50.0 | 50.0 | | 60.0 | | 70.0 | | 80.0 | | 100.0 | |
| Այլ եկամուտներ | 300.0 | 300.0 | | 350.0 | | 400.0 | | 450.0 | | 500.0 | |
| | | | | | | | | | | | |
| Պաշտոնական ընթացիկ դրամաշն. | 9441.9 | 10022.1 | | 10200.0 | | 10400.0 | | 10600.0 | | 10800.0 | |
| | | | | | | | | | | | |

## 2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կապիտալ վերանորոգման և բարեկարգման կարիք ունեն մշակույթի տունը, ,ճանապարհները,համայնքապետարանի շենքը

- գործազրկություն,սոցիալապես անապահով աղքատ բնակչություն, ցածր աշխատավարձի առկայություն
- խմելաջրի ցացի բացակայություն
- ոռոգման համակարգի անմխիթար վիճակ

Գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիրը դժվարություններ է առաջացրել համայնքի բյուջե մուտքագրվող հողի հարկի և գույքահարկի գանձման գործընթացում:

Նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտներից: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

## 2.6.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի զարգացումն ապահովող միջոցառումների մշակման և իրատեսական արդյունքների հասնելու համար իրականացվել է համայնքի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին միջավայրի կողմից ընձեռնված հնարավորությունների և սպառնալիքների գնահատում

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| 1. Հեռախոսակապի և հեռուստաընկերությունների առկայություն<br><br>2. Համայնքային իշխանությունը պատրաստակամ է համայնքում ներդրողներին նպաստավոր պայմաններ առաջարկելիս<br>3.Անշարժ գույքի ցածր գներ<br>4. Պտղատու և խաղողի այգիների մոտ 70 հա տարածք | 1.Խմելու ջրի համակարգի բացակայություն<br>2.Գազաֆիկացման բացակայություն<br>2.Անբարեկարգ փողոցների առկայություն<br>3.Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի ձեռքբերման անհրաժեշտություն<br>4.Գործարար-ակտիվ երիտասարդների թույլ կապ<br>5.Առկա գործազրկություն<br>6.Բնակչության վարկունակության անկում<br>7. Ներդրումային ծրագրերի և արտասահմանյան ներդրողների բացակայություն<br>8.Գյուղատնտեսական մթերքների իրացման խնդիր<br>9.Հասարակական տրանսպորտի բացակայություն |
| **Հնարավորություններ** | **Սպառնալիքներ** |

| | |
|---|---|
| - Հեռանկարային ծրագրեր, որոնք կբերեն ֆինանսական կայունության<br>- Մեծ է աշխատուժի առկայությունը<br>- Համայնքի ղեկավարն ու ավագանին վայելում են բնակչության վստահությունը | - Խմելաջրի համակարգի բացակայություն<br>- Համայնքում գազաֆիկացման բացակայություն<br>- Բնակչության անվճարունակ լինելը |

# 3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

## 3.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Բազարանի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները և մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայրը:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- ✓ Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- ✓ Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով,
- ✓ Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)**

| Հ/Հ | Ցուցանիշները | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով) | 10% | 10% | 9.0% | 9.0% | 8.0% |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով | 0.9% | 0.3% | 0.3 % | 0.3 % | 0.3% |
| 3. | Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով | 0.3% | 0.3% | 0.3% | 0.3% | 0.3% |

## 3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- Համայնքում կառուցել խմելու ջրագիծ,գազաֆիկացնել, հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ
- Նորոգել և ավազապատել համայնքի փողոցները ,անցկացնել արտաքին լուսավորության ցանց:
- Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու շահերը.
- համայնքում պայմաններ ստեղծել՝ զարգացնելու փոքր և միջին բիզնեսը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր սեկտորում
- միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար
- բարձրացնել համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը՝ բարելավելով համայնքի բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները
- համայնքի բնակչության մշակութային կյանքի և աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպում
- բարելավել համայնքի բյուջեի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները
- համայնքի ճանապարհների հիմնանորոգում:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական ծրագրերն են՝

- ✓ **Համայնքի խմելու ջրագծի անցկացում, ցանցի կառուցում**
- ✓ **Համայնքի գազաֆիկացում**
- ✓ **Համայնքի վարչական տարածքի քարտեզագրում**
- ✓ **Համայնքի փողոցների և ճանապարհների հիմնանորոգում**
- ✓ **Համայնքի գիշերային լուսավորության ցանցի անցկացում**

✓ Մշակույթի տան կապիտալ վերանորոգում

Նշված խնդիրների լուծման նպատակով նախատեսվող ծրագրերը ներկայացված են ծրագրերի անձնագրերում:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N 1

## Համայնքի խմելու ջրագծի անցկացում, ցանցի կառուցում

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի խմելաջրի բացակայություն</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝<br>Համայնքի խմելաջրի ցանցի կառուցում</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>10100,0</td><td>10100,0</td><td>10100,0</td><td>10100,0</td><td>10100,0</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br>1.Փաստաթղթերի կազմում<br><br>2.ջրագծի անցկացում</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>100,0</td><td>100,0</td><td>100,0</td><td>100,0</td><td>100,0</td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>0</td><td>10000,0</td><td>10000.0</td><td>10000,0</td><td>10000,0</td><td>10000,0</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Խողովակների ձեռք բերում<br>1.2. Տեխնիկայի վարձակալում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. ավազի ձեռք բերում<br>2.2 Խողովակների մոնտաժում, փոսալցում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 500.0հազար դրամ<br>Կապիտալ ծախսեր՝50000.0հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝50500.0հազար դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Բարեգործություն,այլ ֆինանսական աղբյուրներ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքի խմելու ջրագծի համակարգի կառուցում</td></tr>
</table>

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N2

**<u>Համայնքի գազաֆիկացում</u>**

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի գազաֆիկացման բացակայություն | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ՝ Համայնքի գազաֆիկացում | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | 0 | 0 | 200000.0 | 200000.0 | 200000.0 | 200000.0 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br>1.Փաստաթղթերի կազմում | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | - | - | - | - | - | - |
| 2.Կապիտալ շինարարություն՝ գազաֆիկացում | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | - | - | 200000.0 | 200000.0 | 200000.0 | 200000.0 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1.1.Շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը<br>1.2. Կնքել պայմանագիր հաղթող շին. կազմակերպության հետ իրականացնել աշխատանքները<br>1.3 Տեխնիկական միջոցների ձեռքբերում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Իրականացնել աշխատանքները<br>2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 0 հազար դրամ<br>Կապիտալ ծախսեր՝800000.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 800000.0 հազար դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Դոնոր կազմակերպություններ,պետության աջակցություն | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2018-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքի գազաֆիկացում | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N3

<u>Համայնքի վարչական տարածքի քարտեզագրում</u>

(Ծրագրի անվանումը)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքի վարչական տարածքի քարտեզի անճշտություն</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ<br>Համայնքի վարչական տարածքի քարտեզագրում</td><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>-</td><td>500.0</td><td>500.0</td><td>500.0</td><td>500.0</td><td>500.0</td></tr>
<tr><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br>1.Փաստաթղթերի կազմում<br><br>2. Համայնքի վարչական տարածքի քարտեզագրում</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="2">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>-</td><td>500.0</td><td>500.0</td><td>500.0</td><td>500.0</td><td>500.0</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում<br>1.2. Իրականացնել աշխատանքները<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. Իրականացնել աշխատանքները<br>2.2. Կազմել, քննարկել և ընդունել աշխատանքների կատարման ավարտական ակտը</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 0 հազր դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 2500.0 հազր դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 2500.0 հազր դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակչությունը</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքի վարչական տարածքի քարտեզագրում</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N4

Համայնքի փողոցների և ճանապարհների հիմնանորոգում

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ Ունենալ նորգված բարեկարգված փողոցներ և ճանապարհներ | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 1000.0 | 1000.0 | 1000.0 | 1000.0 | 1000.0 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ 1.Փաստաթղթերի կազմում | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | - | - | - | - | - |
| 2. Փողոցների և ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում և նորոգում | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 1000.0 | 1000.0 | 1000.0 | 1000.0 | 1000.0 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.Մանրախճի,ավազի ձեռք բերում<br>1.2. Տեխնիկայի վարձակալում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2,1 Մանրախճի,ավազի փռում ,ամրացում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր 0 հազար դրամ<br>Կապիտալ ծախսեր 5000.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն 5000.0 հազար դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակչները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N5

**Համայնքի գիշերային լուսավորության ցանցի անցկացում**

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Քաղաքի արտաքին լուսավորության ցանցի անցկացում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝<br>Ունենալ գիշերային լուսատուներով լուսավորված, բարեկարգված փողոցներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>-</td><td>-</td><td>-</td><td>1000.0</td><td>1000.0</td><td>-</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքներ<br>1.Փաստաթղթերի կազմում</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td></tr>
<tr><td rowspan="4">2. գիշերային լուսավորության ցանցի անցկացում</td><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td>1000.0</td><td>1000.0</td><td>-</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1.1. Սյուների, լամպերի ձեռք բերում<br>1.2. Լարերի,մալուխների ձեռք բերում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1.Մոնտաժման աշխատանքներ<br>2.2. Անցկացված լուսավորության փորձարկում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 0 հազար դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 2000.0 հազար դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 2000 .0 հազար դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2019-2020թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքի գիշերային լուսավորության ցանցի անցկացում</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N6

Մշակույթի տան կապիտալ վերանորոգում

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Մշակույթի տան անմխիթար վիճակ</td></tr>
